№ 178

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

## ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Ս. Կարապետ, 22 յուլիսի

Ս. Թարգմանչաց վանքէն յետոյ՝ նախապէս եղած որոշման համաձայն՝ հայ տառերի գիւտի 1500 և հայկական տպագրութեան 400-ամեակի առթիւ յոբելեանական հանդէսներ կատարեցան նաև ս. Կարապետի վանքի մէջ ամսոյս 20-ին։

Վարդավառի շաբաթ երեկոյեան եկեղեցական թափօրը կանգ առաւ եկեղեցու բակի մէջ, ուր երկաթէ վանդակաւորների երեք անցքերի վրայ թարմ կանաչներէ կազմւած էին յաղթական կամարներ։ Եկեղեցու ճակատը զարդարւած էր ս. Սահակի և Մեսրոպի նկարներով։ Հազարաւոր ուխտաւորներ կը վխտային ամեն կողմ, թափօրի շուրջը, կտուրների վրայ։ Հոգեհանգստէն յետոյ, Տարօնի առաջնորդ Ն. եպ. Խարախանեանը հանդէսը բացեց և մի քանի հակիրճ խօսքերով դրւատեց ս. Սահակի և ս. Մեսրոպի գործունէութիւնը, որոնք մեր ազգի ցիր ու ցան հատւածները մայրենի գրականութիւնով հնարաւորութիւն ունեցան շաղկապել միմեանց հետ։

Յետոյ խօսեցին Խարբերդի առաջնորդ Պսակ վարդապետը, յոբելեանական յանձնախմբի ներկայացուցիչը, ուսումնական խորհրդի ատենապետը, իսկ մի այլ պարոն թուրքերէն գրաւոր ճառ կարդաց։ Վերջը խօսքը դրւեցաւ պ. Վռամեանին, որը շեշտեց, թէ հայ ժողովրդի գոյութեան և յառաջադիմութեան համար անհրաժեշտ են երկու բան՝ գրիչ և սուր, որոնք պէտք է միմեանց լրացնեն և ազատութեան ճանապարհ բանան։ Մալաթիայի բժիշկ Պօնափարտեան մեր օրերը համարեց այն ժամանակ, առանց որի գրչի գործունէութիւնը ապարդիւն կանցնի. այժմ է, որ գրիչը յառաջ կմղէ և ազգին ու հայրենիքին ապահով վիճակ մը կբերէ։ Պ. Ռոստոմ շեշտեց թէ մեր մի ամբողջական ազգ ըլլալը կասկածելի է, քանի որ այսպիսի համազգային մեծ տօնի օրին մեր բոլոր հատւածները ցիր ու ցան կը գործեն և չեն համախմբւել մի տեղ, մի սեղանի շուրջ, մէկ նպատակակէտի առաջ։ Տարօնը ըլլալով հայ գրականութեան օրրան և հայ գրական գործիչների աճիւնների շտեմարան, ցանկալի և նպատակայարմար կը լինէր, ասաց նա, որ բոլոր հայերը ամեն տեղից հաւաքւէին այստեղ և աւելի մեծ շուքով ու փառաւոր կերպով կատարէին համազգային այս մեծ տօնը. անհրաժեշտ է, որ այսպիսի ուխտի օրերը մենք կարողանայինք կազմակերպել և օգտագործել այնպէս, ինչպէս էր նախաքրիստոնէական շրջանի մէջ, ողոմպիական խաղերով և այլ կրթիչ զւարճութիւններով և տարին մի անգամ հաւաքւել այստեղ, որպէսզի ազգի բոլոր հատւածները կապ ստեղծէին իրենց մէջ ու յառաջդիմութեան մի ուղեգիծ կազմէին։

Հանդէսէն յետոյ հայկական հինգ կուսակցութիւններէն ներկայ գտնւած գործիչների ժողովը ընդունեց պ. Ռոստոմի առաջարկը և յանձնարարեց Տարօնի երիտասարդութեան՝ կազմել յոբելեանական յանձնախմբի նման մի մարմին, մշակել ուղեգիծ և ամեն Վարդավառի տօնին Նաւասարդի նըման հանդէսներ կազմակերպել։

Բանախօսութիւնների ընդմիջումների միջոցին կերգէին Կարնոյ Սանասարեան վարժարանի աշակերտական խումբը և վանքի աշակերտները։

Երեկոյեան տեղի ունեցաւ յոբելեանական ներկայացում. խաղացին Շիլլերի «Աւազակները», որ հակառակ սիրողների անփորձութեան՝ անցաւ բաւական։ Միջնարարների ժամանակ կը նւագէր փող-հարմօնը։ Թատրոնի մուտքը եղաւ մօտ 800 ղրուշ, ծախւած նւիրատոմսերէն գոյացաւ աւելի քան 1200 ղրուշ, որից դուրս գալով ծախքերը, 1500 ղուրուշ կը մնայ զուտ արդիւնք ի նպաստ Տարօնի մամուլի ֆոնդիս։ Նւիրատոմսերի վաճառումը կը շարունակէր Կարնոյ Երիտ. Միութեան սարքած վիճակախաղը ևս տւաւ 800 ղր. «Յառաջ» թերթի օգտին։

Հանդիսին ի միջի այլոց ներկայ էր նաև Կարնոյ նախորդ երեսփ. պ. Գ. Պաստրմաճեանը։ Յաջորդ օրը շնորհաւորական հեռագիրներ ստացւեցին Պոլսէն «Ազատամարտ»-ի վարչութիւնէն, պ. պ. Վահան Փափազեանէն, տոկ. Կ. Փաշայեանէն, Վարդգէսէն, Զարդարեանէն, Զաւարեանէն, Վրթ. Փափազեանէն, Սիամանթօէն և այլն։

Երեկոյեան յոբելեանական յանձնախումբը ընթրիք տւաւ պատւաւոր հիւրերին. ներկայ էր Մշոյ փոխ-կառավարիչ Շաֆգի բէյ։ Աշակերտական խումբը երգեց զանազան երգեր և պարեցին հայկական պարեր։ Ցաւալի էր որ Մշոյ զինւորական գօմանդան, հակառակ իր խոստման, անկախ պատճառներով ոչ ինքը կարողացաւ ներկայ գտնւել և ոչ զինւորական նւագախումբը։

Կարնոյ երիտասարդական միութեան ներկայացուցիչներն ու աշակերտական խումբը ոտքով մեկնեցան Մուշ և Թարգմանչաց վանքը. յաջորդ կիրակի պիտի վերադառնան Աշտիշատ ս. Սահակի գերեզմանի վրայ ևս կատարելու նման հանդէս մը։

Վերջի պահուն հեռագրով կիմանանք որ խումբ մը երիտասարդներ Թիֆլիզէն հասած են Կարին. ս. Կարապետի տօնին չհասնելով, ոտքով մեկնած են դէպի Մուշ գոնէ Աշտիշատի տօնին ներկայ գտնւելու և հայրենի երկրին ուխտ մը ընելու։

Ցանկանք որ անոնք շատ յաջորդներ ունենան։

Աքէլ